

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱՅԱՆԳՈՒՐԻՑ

26 մայիսի

Մեր գիւղերի եկեղեցիները, բացի մի քանիս-
նեցից, գիւղական ցեղապատ և գետնափոր խը-
ճիթներից ոչ մի բանով չեն զանազանվում
Օտարականը՝ որքան էլ հետաքրքրված
որոնէ, այնու ամենայնիւ չէ կարող գտնել գիւղի
եկեղեցին, եթէ նրա դրան առջև ցցված երկու-
կողմից և անտառ ձողերից քաշ արած չը լինի
փոքրիկ զանգակը։ Եկեղեցու մօտիկ գտնվող
տներից առանց արգելքի, թափում են նրա պա-
տերի տակ տաւարի աղբը և զանազան անյիւշի
կեղտոտութիւններ։ Աւելորդ է ասել, որ արտա-
քին կոզմից այսքան տեղի և անշուք եկեղեցու
ներսն էլ համապատասխան կը լինի իր արտա-
քին տեսքին։ Իրաւ որ նրա խախտում և վտան-
գաւոր առաւտարի արդէն կուէ կեանք գերան-
ները և փթած մարթականները, հազար տեղից
ծակծկված առաւտարը, ծոված, ճեղք ճեղք-
ված պատերը, տաճարի կեղտոտ, հասա-
րակ կտաւէ վարագոյրը, անպիտան կերպով
նկարված Աստուածածնի պատկերը, այս և
այն կողմը ցլեր ու ցան արած, պատուոված,
կարկատված եկեղեցական դարձերը, զգեստ-
ները և մաշված, գզգզված գրքերը, տարիներով
չը մաքրված ժանգոտ աշտանակները, և պա-
տերի, սրահների տակ ածած պառաւներին խը-
սիրները, միևնույն և բը և սոյնի փոստե-
րը... տեսնողը բոլորովին իրաւունք ունի ա-
սելու, թէ անասունների փարախները, մաք-
րութիւնը և շքեղութեան կողմից, աւելի բաղ-
դաւոր են այս սրբութեան տաճարներից, որոնք
անտէրութիւնից գտնվում են այսպիսի ցաւալի
վիճակի մէջ։ Ո՞վ է մեղաւոր։ Ո՞ւմ պարտակա-
նութիւնն է ժողովրդոց ուշադրութիւնը հրա-
ւիրել այս քայքայված, լոկ եկեղեցի անուն
կրող և վտանգաւոր խրճիթներին վրա. ժողո-
վուրդը ամեն րօպէ պատրաստ է թէ անձնա-
կան աշխատասիրութեամբ, թէ նիւթական մի-
ջոցներով ուրախութեամբ օգնել սկսվող գործին,
եթէ յորդորող և առաջարկող լինի։ Ամենեին
չեմ կասկածում թէ իւրաքանչիւր տուն զլանայ
վճարել 30-ական րուբլ այդ սրբութեան տա-
ճարների վերանորոգութեան համար։ Մասնաւոր
որ իւրաքանչիւր եկեղեցի ունի իր համար որ
և իցէ քանակութեամբ դրամագում, որը այս
և այն մասնաւոր անձանց վրա երկար ժամա-
նակ մնալով, կորչում և անհետանում է հեռզնտէ,
անհոգութենից։ Գիւղական ժողովուրդը երբեմն
մեծ մեծ խօսում է, դատում է և շատ շուտով
վճռում է, բայց երբ գալիս է զանգակը քաշ
անելու ժամանակ, ամենքը իրանց ծակերն են
մտնում։

Մեր գիւղական եկեղեցիները գրկված են
նաև կարեւոր և փոքր շատէ ժամատարութեան
մէջ վարժված տիրացուներից։ Ժամերգութեան
ժամանակ, եթէ չեն ուղում որ լսելիքներդ խա-
նաւոր։

զանվում միմեանցից։ Բայց ինչ սարսափելի
հարկեր են գործ դնում մեր պարոն աղամոր-
դիքը իրանց գաղաւթիւնը ցոյց տալու...

Ես էլ անհամբեր սպասում էի, բայց յանկարծ —
«Աղա, ինձի չնի թորգիլ ան պիղծ պարսկի
բերան ջարթիւն» ասաց մինը ետեկցա կիսով
չափ խորիւն ձայնով։

Ջարմացած հետ նայեցի ես։
Նա մի երիտասարդ էր — մեր խեղճ մշակն ե-
րեց մինը։

Նայելով պատառոտած շորեր ունեցող այդ
դրացու և նրան համեմատելով պարսկի հետ,
ժողացի ես և խիստ կոտորվեցի նկատելով որ
ժպիտս վշտացրեց նրան։

Չէ, պարոն քո բանը չէ։ «Գլխուդ դուրբան եղ-
նիւմ, ետի քիւմ վարծ եմ այդ խաղին մէջ։ Ըմբի-
շութիւնի (փաշլըվան) կը հասկնամ, չէ թէ պար-
սիկ, այլ արջեր գետին զարկել եմ...»

— Բայց պարսիկ ըմբիշ արջից էլ զօրեղ է։
«Մեռնիմ արեւու...» շարունակեց նա աղե-
տալի հայեացքով։

Երևի իմ պաշտօնական հազուստով մեծ ինչ
համարվեցի դրացուս մօտ որ ինձ էր խնդրում
նա։

Նա ուղեց նորից աղաչել, բայց ասեմ —
«Աճարըմ, աճարըմ...» նորից լսվեց ամբոխի
մէջ։

Պարսիկը օրինաւոր կերպով չղքած իր հակա-
ռակորդի կուրծքին ջանքախում էր նրան։ Նորա

գարվեն, պէտք է ակաւիւնեցի պինդ փակեա,
որովհետեւ նրանց ժամատարութեան մէջ չեն
կարող գտնել կարգ, կանոն և ձայների ներդաշ-
նակութիւն։ ամենքը իրանց ձայնի համա-
ձայն մի և նոյն շարականը զանազան տեսակ
եղանակներով երգում են առանց ձայնի խնայո-
ղութեան։

Շատ անգամ քահանան, տիրացու չը ճարվե-
լու պատճառով, միայն է կատարում բոլոր ժա-
մերգութիւնը։ Շատ անգամ էլ մի և նոյն պատ-
ճառով գիւղական ժողովուրդը ամիսներով պա-
տարալի երես չէ տեսնում։

Մի անգամ բաղդ ունեցայ ներկայ լինել պա-
տարալին Շ. գիւղում, որտեղ միայն մի տիրա-
ցու մի և նոյն ժամանակ դպրութիւն էր անում
և սպասաւորութիւն։ Խեղճը երբեմն գնում էր
քահանայի մօտ «Օրհնեա տէր» էր բղավում, գա-
լիս էր ցած «և ընդ հոգոյդ քում» ասում։ Երբեմն
մի և նոյն տեղը կանգնած, ամեն բան ծայր
ծայրի կապած ասում էր առանց շնչառութեան
մինչև պատարագը վերջացաւ։ Ինչու. որովհետեւ
գիւղը ուրիշ տիրացու չուներ։

Ուրեմն ինչ է այս ցաւալի, երկոյթների գը-
լաւոր պատճառը, եթէ ոչ ուսումնարանների
պակասութիւնը. որովհետեւ եթէ գիւղերը ունե-
նան իրանց համար մի մի ծխական դպրոց, այն
ժամանակ ի հարկէ իւրաքանչիւր եկեղեցի էլ
կունենայ իր համար շատ նորահաս տիրացու-
ներ և պառաւած տիրացուների ազաւային
ձայնը էլ չեն խանգարի ժամերգութիւնը և չեն
զգլեցնի լսողներին։

Այժմ ասացեմ, խնդրեմ, սիրելի ընթերցող-
ներ, այսպիսի քայքայված «եկեղեցի» անուն
կրող խրճիթները, ողէտ, կոպիտ և անուսում
քահանաները և այդ պառաւած, քաւթաւ և
ազաւածայն տիրացուները կարող են գրաւել
ժողովրդի համակրութիւնը, սէրը, ջերմեան-
դութիւնը դէպի ճշմարիտ եկեղեցաւորութիւն։
Ել ինչ իրաւունք ունենք գանդալուելու թէ,
այս ինչ, կամ այն ինչ մարդը չէ սիրում
չուտ շուտ եկեղեցի գնալ, քահանային չէ յար-
գում... և այլն։ Պատահում է շատ անգամ, որ
քահանան ժամերգութիւնը վերջացնում է և ոչ
ոք եկեղեցում չէ լինում բացի ժամօղից։

Գիւղերում իշական սեւը (բացի պառաւեն-
րից) միայն նշանաւոր ամօներին է եկեղեցու
երես տեսնում, ուրիշ անգամ մեծ ամօթ է, եթէ
մի օրիորդ կամ մի ջահել հարս եկեղեցի գնայ։

Ս. Տէր Մեղրեւեղեկեանց

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱՆԱԳԻՑ

18 մայիսի

Ախալքալաքի գաւառը բաղկացնում են մօտ
100 գիւղեր, 70% հայեր են, 15% թուրքեր, 10%
հայ կաթօլիկներ և 5% վրացիներ։ Հայոց ամեն
մի գիւղում համարեա կայ մի մի ուսումնարան,
որտեղ միայն աւանդում են Սաղմոս, Նա-
րեկ և Աւետարան. վրաց մի երկու գիւղում
կան տէրութեան հաւաք բացված արքունա-

հաւատակից աղաները Ղուրանի մարգարիւ-
թիւն քարոզող դուռը միտ զգած ջերմեան-
դութեամբ վրա թափվեցին զոհը ազատելու
յաղթողի ձեռքից... շարեան անհամբերութե-
նից կը ընտանցնում էր ատամները և աղաղում
ձեռքերը։ Նա համարեա ոտի վրա մի րօպէ ան-
շարժ էր կամենում կանգնել...

Քիչ մնաց չը ճեղքէր ամբոխը և հասնէր պար-
սիկի ջանքին։

Ոտակականպետը 1/3 ժամ զաղարուսն նշանա-
կեց։

Ամենքի լեզուն պարապել էր յաղթանակող
պարսիկին աստուածացնելու, իսկ ես ժամանակ
զատալ մշակ դրացուս հետ խօսելու։

IV

«Ո՞վ է» հարց արաւ պ. Գեղ... եսն։
Ես պատմեցի նրան յանդուգն դրացուս ցան-
կութիւնը։

Պ. Գեղ... եսն, մի զննող հայեացք ձգելուց
յետոյ, ասաց։

«Այա, որդի, հայի անունը բարձրացրու, այս
մօլեկրօն բեգերը հպարտութիւնից քիչ է մնացել
պատմական, կարող են նրանց քիչ ամաչցնել»։

— Վնք գլխում, ասաց սրտոտ երիտասարդը
և պատրաստվեց։

Ժողովեցան միւս իշխանաւորներն էլ,
երիտասարդին չընդապառեց ոսկու և արծաթի
փայլով ապրող խուբը։

կան ուսումնարաններ։ Հայ-կաթօլիկների գիւ-
ղերում կան նոյնանման ուսումնարաններ ինչ-
պէս հայոց գիւղերում։ Իսկ թուրքերի մօտ, ամեն
մարդ գիտէ որ նրանք ուսումնարանի անունն
անգամ չը գիտեն, — չը կայ ոչ մի ուսումնարան։

Հայ գիւղերում երկար տարիներ է որ ուսում-
նարանները գոյութիւն ունեն, բայց ինչ արդիւնք
են տուել, այդ միայն յայտնի է հոգեւոր բարձր
կառավարութեան։

Մեր գիւղացու մանուկները սովորելով անգիր
կրօնական գրքեր, եկեղեցական արարողութիւն-
ներ դառնում են տիրացուներ, և վերջը քահա-
նաներ։ Գիցուք մի գիւղում կան միջին թուով 3
տիրացուներ, ի հարկէ ամենի նպատակն է լի-
նել քահանայ։ Այդ իւրաքանչիւր տիրացուն իր
բարեկամներով կազմում է մի մի խումբ. այդ
միջոցին ստիպված է և մի խումբ իր համար
կազմել և գիւղի քահանան. ուրեմն գիւղը բա-
ժանվում է չորս մասի — տիրացուականների և
քահանայականի։ Քահանան իր խմբով աշխա-
տում է ամենայն ջերմեանդութեամբ հաւածել
այդ տիրացուներին, երբեմն իր աշակերտնե-
րին, որ նրանք քահանայ չը ձեռնադրվեն և իր
կօղէկներին շնաւ չը տան։ Նա ներկայացնում
է խնդրագրեր բարձր կառավարութեան, ներ-
կայացնելով տիրացուներին իբրեւ անբարոյա-
կաններ, անգրագէտներ և այլն և կաշառներ է
տալ իր մեծերին։ Իսկ տիրացուների խումբը
կամենում է հաւածել միւսներին աշխատել փո-
ղեր միմեկի, որ քահանայ ձեռնադրեն իր հե-
րօպին։ Ահա այսպէս գիւղի մէջ ծագում է վէճ,
խռովութիւններ շատանում են, կուրը երբեմն
սաստկանալով անմիտ ժողովուրդը իր սեփա-
կան գործին, երկրագործութեան շնաւ է տալի,
մինը այրում է մինի խոտի դէղը, միւսը գողա-
նում է մինի արօրը և այլն։ Եւ ասա այս է
այժմեան մեր գաւառի հայ գիւղերի ուսումնա-
րանների արդիւնքը։

Մի ժողովուրդ, որ իր գործին, իր պարապ
մունքների համեմատ չի ունենայ մի առաջնոր-
դող, նա չի դարգանայ, չի առաջ գնայ։

Մեր գիւղացիներին հարկաւոր են երկրագոր-
ծական ուսումնարաններ։

Հոգեւոր կառավարութիւնը աշխատում է ամեն
մի գիւղում մի մի ուսումնարան բանալ (իր
օգտի համար), բայց ընթերցողները տեսան վի-
րեւում այդ ուսումնարանների արդիւնքը։

Ինչի հոգեւոր կառավարութիւնը չէ աշխա-
տում բանալ իր եկեղեցապատկան հոգերի մէջ
օր. կարգաւ, Սուլայ, Գաղէշ և այլն, մի երկ-
րագործական ուսումնարան. նա ստանում է այդ
կալուածներից 15000 րուբլից աւելի եկա-
մուտ. Այդ գումարով կարելի է հինգիւ մի երկ-
րագործական ուսումնարան, Լօչինոյի երկրա-
գործական ուսումնարանի ուղղութեամբ, բայց
աւելի լաւ կազմակերպված։ Աւելացնելով պան-
րեգործութիւնը և գինեգործութիւնը (Լօչինոյի
ուսումնարանում չը կան քոյղ առարկաները։
1875 թւին պ. Վախտանգ Գուշարեանց, իբրեւ
ուսուցիչ, սիրելով իր աշակերտներին պրօգրամ-
մից դուրս աւանդում էր գինեգործութիւնը միայն
տեօրիայով)։

Եթէ հիմնվի մի գիւղատնտեսական ուսումնա-

«Հնչ է, հայ է դուրս եկողը» լսվեց ընդհա-
նուր գողորդը։

Պարսիկ մենամարտը մի արհամարհական հա-
յեացքով յայտարարեց իր զոհի ինչութիւնը.
Ամենքը յետ քայլեցին։ Հրապարակը լայնա-
ցաւ։ Հայ իշխանները մի կողմ, պարսիկները
միւս կողմ կանգնեցին իրանց հերոսների պաշտ-
պանութեան համար։

«Չէ, ջահիլ է. չէ կարող...» Զեռքը կը կոտ-
րի... հաւատացնում էին ամենքը։

Վերջապէս փողհարները հնչեցրին փողերը։
Թմբուկի զարկը մեծ գոռոց հանելով մօտիկ գը-
տնիւղ դատարի եկեղեցիների մէջ զմբմբեց-
նում էր օդը։

Վերջապէս, իբրեւ Մարտը կուրի դաշտում, աս-
պարէզ մտաւ մեր ըմբիշը։

«Ի՞նչ... մշակ է, մշակ...»

Ամենքը մոռացան իրանց կարծիքները։ Ուշա-
գրութիւնը սանձեց ամենքին։

Հերոսները աքաղաղի պէս, համապատասխան
թմբուկի զարկին, մի քանի անգամ քաշա-
պոյտ արեցին։ Ցանկարծ, երբ խոր լուռութիւն
էր տիրում, մեր ըմբիշը «Նա մարդ կարապետ»
ասաց ու կաշաղի պէս թռաւ...

Պարսիկը զկուտում էր արդէն նորա ծնկների
տակ...

«Հայը յաղթեց. հնչը յաղթեց» վկայեցին
զարմացած հանդիսականները։

Հայ իշխանները վրա վազեցին, համբուրեցին

րան մեր գաւառում, նա մեծ օգուտներ կը տար
Գիւղացին կաշխատէ առաջ տանել երկրագոր-
ծութիւնը, կը թողնէ աւիականը, կը հետի եւ-
րօպականին, իր արդիւնքերածը կը վաճա-
ռահանէ արտասահման. այն ժամանակ ամե-
նայն կարողացող տիրացու չի ձգտի դէպի քա-
հանայութիւն։

Բ. Պիճիկեան

ՆԱՄԱԿ ԽՄԱՍԳՐԻՆ

Բազու, 22 մայիսի

Կը ստանաք սոյն թերթովս հարկւր տասն եր-
կու րուբլի թղթադրամ Ռաշտում հաւաքված
յօգուտ թիրաքիայից Ռուսաստան դաղթած հա-
յերին և խնդրեմ հասցնել գաղթականաց ընկե-
րութեան և նուիրատու անձանց անուններն և
գումարը անցուցանել ձերդ պատուական լրա-
գրի մէջ։ — Ներսէս Վարդանեանց 10 րուբլ, Աս-
տուածատուր Տէր-Օհանեանց 10 ր., Մեղրում
Բժիշկեանց 3 ր., Կարապետ Ներսէսեանց 3 ր.,
Մկրտիչ Աւետիսեանց 10 ր., Իսահակ Մէլքե-
Յովսէփեանց 2 ր., Աստուածատուր Մահտեսի
Աստուածատուրեանց 4 ր., Յակոբ Շահազա-
րեանց 2 ր., Սարգիս Իվանեանց 3 ր., Աղաջան
Մահտեսի Անանեանց 4 ր., Գրիգոր Սարգսեանց
3 ր., Շամիր Գիւրջեանց 3 ր., Աղաբէկ Գրիգո-
րեանց 1 ր., Ալէքսան Խանդավերեանց 1 ր.,
Հայրապետ Պարոնեանց 2 ր., ԲԱՇԽԻՄ ԴՈՅԵ-
ՅԻՄ 50 ր., Ղազար Յակոբեանց 1 ր. 50 ր.,
Միքայէլ Նազարեանց 1 րուբլ, Մարտիրոս Յա-
րութիւնեանց 6 ր. 50 ր., Բարսեղ Յովսէփե-
անց 5 ր. 50 ր., Նիկողայոս Գրիգորեանց 5
ր. 50 ր., Ղազար Իվանեանց 4 ր. 50 ր., Ղա-
զար Միքայէլեանց 3 ր. 20 ր., Ներսէս Մնացա-
կանեանց 3 ր. 30 ր., Գասպար Մահտեսի Աս-
տուածատուրեանց 1 ր., Մկրտիչ Արեւիկեանց 2 ր.,
Խաչիկ Գաւառեանց 1 ր. 50 րուբլ, Կարապետ
Մեղրումեանց 1 ր., Տիրոս Գարութիւնեանց 1
ր., Աղանուր Կարապետեան 1 ր., Մարտիրոս
Խաչատուրեան 1 ր., Մատուր Գաւառեանց 1 ր.,
Գարութիւն Մնացականեանց 10 ր. — (Ընդամենը
է 112 րուբլ։

Յ. Ա. Մնացականեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեղ հաղորդում են, որ ԹԻՖԼԻՍԻ ուսում-
նարանների մի քանի հայ աշակերտներ մտադիր
են մի ներկայացում տալ լօզուտ «Արարտեան»
գիշերօթիկ ուսումնարանի։

Խնդրում ենք մեր բաժանորդներից նրանց,
որոնք վճարել են եօթ րուբլ, լրացնեն իրանց
տարեկան բաժանորդագինը, ուղարկելով «Մշակի»
խմբագրութեան պակասորդ 3 րուբլ։

ԹԻՖԼԻՍԻ մեղ հաղորդում են, որ այնտեղից
Գամբօրի տանող ճանապարհը սկսել են ուղղել

Նրա ճակատը և գովելով առատ նուէր բաշխե-
ցին... բեգերը անհետացել էին։

«Ո՞վ է» հարց են անում։
«Որտեղացի է»։

— Հալօն է։

«Արի, Հալօ, ինձ մօտ. ասում էին իշխանե-
րից մի քանից (որոնք գիտեն իրանց զուար-
ձութեան համար գինի փողով մարդու ազատու-
թիւնը) քեզ լաւ կուտացնենք, լաւ կը պահենք
մեզ մօտ որ ամեն տարի մի մի անգամ մեզ
համար փահեկանութիւն անես»։

— «Ես իմ տանս ծառայ կը շինեմ, ասում էր
միւսը, որ մի մին իմ թշնամի թուրքերին ծե-
ծես»։

Իսկ ձվ է նա. ինչ պէտք ունի. բացի ոյծը
էլ ինչ նշանաւոր կողմեր ունի — այս մասին հարց
անող չը կար։

«Չեղնիր, աղա, ետի վան մեր էրկուր թորգիր
եմ զիմ մէրիկ քուրդ հարկահանու ձեռք. Մուշի
սուլթան զձեռ արեւ օրինաւ, ետի կերթում զիմ
խայրենիք զիմ տուն, զիմ մէրիկ ազատեմ...»

Ամբոխը բաւականացած համարելով իր վնայ-
րենական կիրքը վազեց ճաշ անելու, իսկ իր
մօրըգրութիւնից փրկելու նոյն օրը խոսպեց
դէպի հայրենիք մեր ծանօթ Հալօն, մեր ըմ-
բիշ վանեցին։

Գր. Պապեան

Եկած անձրևները շատ էին փռանել այդ ճա-
նապարհի մի քանի տեղերին:

«Մշակի» խմբագրութիւնը խնդրում է այն բո-
լոր անձանց, որոնք յօդուածներ, նամակներ կամ
լուրեր են հաղորդում, բացի կեղծ անուններից
ստորագրել և խական անունը, որ միշտ գաղտնի
կը պահվի:

Է.ՋՄԻԱՄԵՆԻՑ մեզ հաղորդում են, որ յունիսի
4-ին պէտք է օրհնեն սուրբ մեռելներ: Մեռելի
պղինձը արդէն դրած է Աւագ Սեդակի վրա և
ծածկված է մի ոսկեթել սփռոցով, որի վրա դրած
է ոսկեգոծ արծաթեայ բաւական մեծ և ճարտար
ձուլված էլփրանի պատկերը:

ՎԱՂԱՐՇԱՊԱՍՏԻՑ մեզ հաղորդում են, որ օդը
անմաքրութիւններից և չորից այնքան ապա-
կանված է, որ այնտեղ ապրել ամառը անկա-
րելի: Այնտեղ ամեն քաղաքիւնում կարելի է
պատահել տենդով հիւանդներին: Այս լուրը իս-
կապէս նորութիւն չէ, ամենքին յայտնի է, որ
էջփրանի և Վաղարշապատի օդը միշտ ապա-
կանված է այնտեղ գտնվող անմաքրութիւննե-
րից:

Է.ՋՄԻԱՄԵՆԻՑ մեզ գրում են. «Մայիսի 21-ին
տօնեցին Նորին Վեհափառութեան օծման տա-
րեդարձը: Կաթողիկոսը հիւանդ լինելով, չը կա-
րողացած ներկայ լինել պատարագին: Այս օրը
առաջ միշտ հրախաղութիւն էր լինում և Նրա-
նից հրախաղութիւն էին զինուորական երաժիշ-
տերը, այս անգամ ոչ մէկը և միւսը չը կային:
Սեղանատանը ճաշի ժամանակ եպիսկոպոսնե-
րից մէկը ճառ կարդաց, Նա ակնարկեց ճեմա-
րանի մէջ պատահած անկարգութիւնների վրա
և յայտնեց, որ Նորին Վեհափառութիւնը
կը կարգադրի, որ այնպիսի անցքեր այլ ևս չը
պատահեն: Մենք չենք կասկածում, որ Նորին
Վեհափառութիւնը ունի բարի ցանկութիւններ,
բայց եթէ նոյն գործակիցներով պէտք է չարի-
ների առաջն առնվի, նրա աշխատանքը իդուր
կանցնի»:

Մեզ խնդրում են յայտնել ՎԱՂԱՐՇԱՊԱՍՏԻ-
ժական ուսումնարանի վարչութեան չնորհա-
կալութիւնը այն անձանց, որոնք այդ ուսում-
նարանին զանազան գրքեր են նուիրել:

Չենք կարող չը յայտնել մեր խորին համակ-
րութիւնը «Донская Пчела» լրագրին մի շարք
գեղեցիկ առաջնորդող յօդուածների համար, որ
նա տպել է հայերի մասին: Խորհուրդ ենք տա-
լիս մեր ընթերցողներին ստանալ այդ լրագիրը:
«Донская Пчела» հրատարակվում է Բոստոնի
(Դոնի վրա) քաղաքում, դուրս է գալիս շաբաթը
երկու անգամ: Լրագրի տարեկան գինն է 7 ր.,
իսկ կէս տարվանը 4 րուբլ: Այդ լրագրի խմբա-
գիրն է Յ. Ա. Տէր-Աբրահամանց:

Մենք յիշեցինք մի ինքնուս հայ երիտասարդ
Դ. Վաղեմանի մասին, որ չինել է Վարդան Մա-
միկոնեանի արձանը ալեքսանդրից: Այժմ այդ
երիտասարդը խնդրում է մեզ յայտնել որ ծա-
խում է այդ տեսակ արձանների և ցանկացողները
կարող են դիմել նրա խանութը, որ գտնվում է
Թիֆլիսի Կուկուշի Միքայէլեան փողոցում,
Զարափովի տանը, խանութ № 4:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻՆԱՆՍԻՍ

«XIX Siècle» լրագիրը գրում է թէ մա-
յիսի 7/19-ին կիրակի օր մեծ բազմութիւն
է եղել արուեստասէրներին, այնպէս որ այ-
ցելունքը չէն կարողացել հանգիստ շրջել և
ամեն բան դիտել: Նախորդ կիրակի օր 80,000
այցելու եկած էր արհեստասէրներին: Իսկ այդ
օրը եկողների թիւը 100,000-ից աւելի է
եղել: Արուեստասէրների հետաքրքրական և
ամենագեղեցիկ տեսարաններից մէկն է Ave-
nue des Nations (Ազգերի ծառուղի) որ
չինված է Champs de Mars-ի (Արեւմտեան
դաշտ) ներքին պարտիզէ մէկ բաժնում: Ա-
րուեստասէրներին մասնակցող ամեն ազգեր
ներկայացնում են այդտեղ իրանց ազգային
ոճով շինված շէնքեր: Ռուսաստանի բաժնի
վերաբերութեամբ կարգում ենք հետևեալը

«Indépendance Belge» լրագրում «Ռուսաց
փայտակերտ շէնքերը նմանում են շվեդա-
ցիների և Նորվեգացիների շէնքերին, այն
զանազանութիւնով որ ռուսաց շէնքի փայ-
տերը աւելի մեծ, աւելի թանձր և աւելի
ծանր են: Հոգիւ թէ տաշված և կոկված են
և տեսնում ենք բնականական հին յիշատակ-
ներ իրանց պատուհանների կամարագիծների
և առաստաղների բոլորակալիծների մէջ:
Կարծում էի թէ ռուսական շէնքը վերջացած
է և այդպիսի պարզ ձևով կը լինի: Բայց
երևի թէ պէտք է զարդարեն նրան, չուխայից
գործուածներ կախ տալով պատերից և շէն-
քի երեսակողներ ներկելով: Վախենում եմ որ
խանդարեն նրան, փոխանակ գեղեցկացնելու:
Այդպէս մնալով, աւելի անման և աւելի
աջողված կը լինեն»:

«Դիւպանլու արքեպիսկոպոսը իր առաջար-
կութիւնը ներկայացրեց սենատին, Վոլտէրի
դարեգարձի վերաբերութեամբ: Նա առա-
ջարկում էր արգելել Վոլտէրի գործերի հա-
ւաքածոյն որ հրատարակվեցաւ նրա դարե-
գարձի առիթով: Բանտարկել և պատժել նրա
հրատարակողին և խափանել դարեգարձի
հանդէսը: Հարկւր տարուց յետոյ հալածելով
Վոլտէրին, նա կամենում էր նրա քանակի
վրա հարուածել հանրապետութիւնը և ազա-
տական գաղափարները: Բայց այդ չաջողվե-
ցաւ նրան: Պ. Դիւֆոր ցոյց տուեց զօրաւոր
փաստերով թէ ժամանակագրական մեծ սխալ
(անախորժիք) կը լինէր Վոլտէրին հալածել
նրա մեռնելուց հարկւր տարի յետոյ և թէ
Վոլտէր մեծ ծառայութիւններ է արած
Ֆրանսիային, ոչ թէ միայն զբաղմունքի պար-
ծանք լինելով, այլ և բարբերը ազնուացնե-
լով և արգարութեան և կրօնական ներողա-
մունքի գաղափարները տարածելով Ֆրան-
սիայում: Պ. Դիւֆորի խօսքերը ծափահա-
րութիւններով ընդունվեցան սենատում ձա-
խակողմանիներից: Դիւպանլուի աշխատու-
թիւնը այն հետևանքն ունեցաւ որ Վոլտէրի
գործերի նոր հաւաքածոյն, որի հրատարա-
կողին կամենում էր բանտարկել տալ, այժմ
20,000 օրինակ ծախված կը լինի, քանի որ
սկզբից 2,000 օրինակ էր միայն տպագրված:
Վոլտէրի գործերի հրատարակողին բանտար-
կելու համար հարկաւոր էր յետ դառնալ
գէպի հին ժամանակները և ինչպէս ասել է
Թիւ Սիմոն, վերականգնել Բաստիլիս ուր
բանտարկեցին Վոլտէրին:

Փարիզի թաղապետական ժողովը որոշել է
փառաւոր հանդէսով տօնել յուլիսի 14-ին
Բաստիլիայի քանդվելու տարեդարձը: 1879
թւի յուլիսի 14-ին և 15-ին, այդ նշանաւոր
օրերում էր որ ժողովուրդը ոտի կանգնեցաւ
և քանդեց Բաստիլիս ուր բանտարկված են
շատ նշանաւոր մարդիկ և, ինչպէս ասում են
Ֆրանսիացի պատմաբաններից մի քանիսը,
մինչև անգամ Աւետիք արքեպիսկոպոսը, հայոց
անհետացած պատրիարքը Կ. Պոլսում: Թա-
ղապետական ժողովը որոշել է 300,000 ֆրանկ
ծախս անել, այդ պետական նշանաւոր բան-
տի քանդվելու տարեդարձը տօնելու համար:
Այս օրերում մի ցաւալի գէպը տխրե-
ցրած է փարիզցիներին որոնք ուրախանում
էին ազգային հանդէսներով: Բէրանժէ փողո-
ցում, Բլանշօնի վաճառատունը, ուր դիւրա-
վառ նիւթեր և խաղաղենքեր էին գտնվում,
յանկարծ այրվել է, յայտնի չէ թէ ինչպէս
կրակ ընկնելով: Թէ այդ ահագին շէնքը և թէ
նրա շրջականերում գտնված տները և վաճա-
ռանոցները, ահագին որոտումի ձայնով յան-
կարծ օդի մէջ բարձրացել, թնդանթի ռուս-
տակների տակ թաղել էին շատերին: Այդ
հրդեհից մնացած ընտանիքներին օգնելու
համար հանգանակութիւն է բացվել որի գու-
մարը հասել է մի քանի օրվայ մէջ 22,000
ֆրանկի: Ուէլսի իշխանը և Աօստի դուքսը,
ամեն մէկը տվել են 1000 ֆրանկ:

ՊԱՐՍԱՊԱՍՏԱՆ

Թէհրանից սուրիլի 5-ին գրում են «Indé-
pendance Belge» լրագրին հետևեալը: «Ներկ
առաւում Թէհրանում պատահեցաւ մի ցաւալի
գէպը որի նմանը չենք տեսնում Պարսկաս-
տանի ժամանակակից պատմութեան մէջ: Նա-
հը կառքով գնաց աղօթելու Նահապէհ Ապ-
տիւլաղինում ուր սովորութիւն է գնալ երբ
մէկը պատրաստված է ճանապարհորդութիւն
անելու: Երբ անց էր կենում պալատի մօտ
գտնված մի հրապարակից, զինուորական շո-
րիկ հազած մի խումբ մարդիկ որոնցից մէկը
մի աղբրագիր ունէր իր ձեռքում, մօտեցան
շահի կառքին: Կառքը սովորականին համե-
մատ հանդարտ գնում էր և այդ աղբրագիր
տվողները երկու կողմից նրա հետ վազում
էին: Նահը իր մարդկերանցից մէկի միջոցով
յայտնեց նրանց թէ երբ իր աղօթքը անէ և
վերադառնայ քաղաք, կը պատասխանէ նրանց:
Բայց աղբրագիրը տվողները էլ վազում էին
կառքի երկու կողմից և վերաւորող խօսքե-
րով խնդրում էին անվիճական պատասխան:
Այդ աղբրագիրով մի զօրազունը խնդրում
էր արձակել իրանց որ վերադառնան իրանց
տներ, թէպէտ ոչինչ պատճառ չը կար այդ
խնդիրը արդարացնող:

Նահը տեսնելով թէ այդ աղբրագիրները
պնդում են, հրաման տվեց կառավարին որ
շուտով քշէ կառքը և պատուիրեց իր մար-
դիկներին հեռացնել նրանց: Բայց աղբրագր-
կաները վայրենիների նման թշնամանքներով
պատասխանեցին շահի հրամանին և քարեր
ժողովելով գետնից, ձգեցին շահի մարդկե-
րանց և նրա կառքի ետևից: Նահը ամենին
սիրելի եղած է այստեղ: Հետևապէս շատ
անգամ դուրս է գալիս պալատից, առանց իր
հետ զօրքեր ունենալու: Յարձակվողները
օգուտ քաղեցին այդ հանգամանքից և հա-
մարձակութիւն ունեցան, տեսնելով շահի հետ
գտնվողների անկարողութիւնը: Փարսիով վե-
րաւորեցին շահի ուղեկիցներից մի քանիսին
որոնց մէջ էր նաև պալատական մինիստր
Ալլահ-է-Նոյի: Որդիներից մինը, շահի
կառքի ապակիներից մինը խորտակեցին և
կառավարին ու ձիաներին մնացեցին: Երբ
յարձակվողները հեռացան, շահը հրաման
տվեց կառքը կանգնեցնել մի զօրանոցի առջև
որտեղից անց էր կենում և պատուիրելով զօ-
րագետին որ շուտով 100 մարդ առած իր
հետ, գնայ ձերբակալէ յարձակվողներին, ինքը
շարունակեց իր ճանապարհը գէպի Նահապէհ
Ապտուլաղին: Փսան մարդ ձերբակալվելով
տարվեցան զինուորական դատարանը ուր զին-
ուորական մինիստրի նախագահութեամբ
ժողով հաւաքվեցաւ և որոշեց քննվելուց յե-
տոյ հաստատվեցաւ որ նրանցից տասը զօրք
չէին, թէպէտ զօրքի շորեր ունէին հագած, այլ
պատկանում էին բարոնների աղանդին: Պա-
տեհազնական ատենը միաձայն վճռեց այդ 10
մարդիկներին մահով պատժել և նրանց մեղ-
սակիցները արձակել: Ծեծելուց և մի քանի
օր բանտարկելուց յետոյ: Դատաւարութեա-
ները ներկայացան շահին և լսեցին պատե-
րազմական ատենից որոշված մահի վճիռը:
Նորին վեհափառութիւնը ներեց նրանցից
մէկին միայն որ ուշքից ընկաւ իր մահի վը-
ճիռը լսած ժամանակ: Յարձակումը առաւօ-
տեան էր եղած. մահի վճիռը տրվեցաւ նոյն
օրվայ երեկոյին: Նասրէդին շահը, սովորական
գէպերում, շատ անգամ ներողութիւն է
տալիս, նա չէ սիրում արեւահեղութիւնը,
բայց պարսիկները այնպիսի բարք և վարք
ունեն որ այս գէպերում չէր կարելի ներողու-
թիւն անել: Այդ ժամանակ ժողովուրդը կա-
րող էր հաւատալ թէ արդարութիւնը անգոր
և թոյլ է այստեղ և թէ զօրքերի գործած
յանցանքները անպատժ են մնում (այդ հա-
մոզումը բաւականին ընդհանրացած է Պարս-
կաստանում): Նահի գնացած ժամանակ ժո-

ղովդի մեծ բազմութիւն ներկայ էր գտն-
վում և ցոյց էր տալիս թէ Պարսից ազգը
շատ մեծ եռանդով սիրում է Նասրէդին
շահին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Բ. Դուռը երրորդ կարգի Օսմանիէ պա-
տանաւան է տվել Կ. Պոլսում հրատարակվող
«Levant Herald» և «La Turquie» լրագիրների
խմբագրապետներին:

— «Daily News» լրագրին հաղորդում են, որ
մայիսի 26-ին Բէլգրադում փողոցային անկար-
գութիւններ կատարվեցան, որոնց ժամանակ
մարդկերանց մի խումբը քարեր ձգեց իշխան Մի-
լանի պալատի պատուհանների վրա: Քաղաքի
մի քանի թաղերում ժողովուրդը աղաղակում էր
փողոցներում «Կեցցէ իշխան Վարագիրօգիկի»:

— «Osservatore Romano» լրագիրը, որ վա-
տիկանի օրգան է, խոսում է Վիլհելմ կայսրի
մահից ազատվելու առիթով պապի արած շնոր-
հաւորութեան մասին հետեւեալը. «Մենք իմա-
ցանք—ասում է լրագիրը—որ Վիլհելմի դէմ
գործած եղեռնագործութեան առիթով, նորին
սրբութիւնը հեռագիր ուղարկեց նորին մեծու-
թեան, որի մէջ ցաւակցութիւն էր յայտնել և որի
մէջ էր նոյն ժամանակ կայսրին շնորհաւորեց, որ
նա Աստուծու օգնութեամբ անմեղա մնաց: Կեր-
մանական կայսրը պատասխանեց նորին սրբու-
թեան հեռագրին կայսերական կանցլէրի միջնոր-
դութեամբ, խնդրելով կարդիսալ Ֆրանկիին կայ-
սրի իսկական շնորհակալութիւնը յայտնել նորին
սրբութեան պապին այն համակրութեան հա-
մար, որ պապը յայտնեց մայիսի 14-ին կայսրի
վրա արած եղեռնագործութեան փորձից յետոյ:

— «Allgemeine Zeitung» լրագրին Լոնդոնից
գրում են հետեւեալը. «Անգլիայի զինուորիկը
ծովի վրա այնպիսի ընթացք է ստանում, որ
մինչև անգամ ծառայութեան համար անպէտք
համարված նաւերը ուղղել են տալիս Բայց որով-
հետեւ տեղութեանական զինարանները արդէն
շատ գործեր ունեն, դրանց ուղղել են տալիս
մասնաւոր զինարաններում: Նաւատիրների պա-
կասութիւն է զգլում, այս պատճառով ծառայու-
թեան են հրաւիրվում արձակուրդ արած նաւա-
ստիկները»:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԻ, 30 մայիսի: «Правитель-
Вѣстн. լրագրում տպված է հետեւեալ բիւ-
լետէնը Կայսրուհու առողջութեան մասին.
«Տենդային դրութիւնը պակասեց, գիշերը ա-
ւելի հանգիստ անցկացրեց, թուլութիւնը
աւելացաւ: Ստորագրած է—Բառիկին»:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԻ, 30 մայիսի: «Полоса»
լրագիրը հաղորդում է, որ հայոց արքեպիս-
կոպոս Խորէն Նարեկ, թիւրքաց հայերի
պատգամաւորը, կիրակի օրը հայոց եկեղե-
ցում վերջին օրհնութիւն տուեց հայոց հա-
սարակութեան և ասաց. «Յերեք ամիս սրանից
առաջ ես դուրս եկայ Կ. Պոլսից հոգեկան վեր-
գովմունքներով լի: Իմ առաջ միայն խուսար
անյայտութիւն կար: Ինձ յանձնած դժուար
գործի աջողվելու յոյսերը փոխվում էին անա-
ջողութեան երկիւղով: Այժմ, եղբայրներ, ես
ձեզ մնա բարեւ եմ ասում և գնում եմ Պե-
տերբուրգից, ունենալով ամենալաւ յոյսեր իմ
յանձնարարութեան աջողվելու համար: Այդ
անգին յոյսերին յարութիւն տուեց Հզոր Թա-
ղաւորը, որի ամենակարող կամքը հաստատ
վճռել է ազատութիւն պարգեւել Թիւրքիայի
հայրենիքը քրիստոնեաներին: Թագաւոր Կայ-
սրի բարձր և ողորմած բարեհաճութիւնը
գէպի հայոց ազգը ամենալաւ գրաւական է
իմ յոյսերի կատարվելու համար: Ուրեմն ջերմ
աղօթեցէք Աստուծուն մեր ազգի բարեբա-
րութեան համար: Այսպէս Ալեքսանդր II-ի համար:
Եզուց երեկոյան արքեպիսկոպոս Խորէնը
ուղևորվում է Բերլին»:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԻՈՒՆԻ